

## ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N 2-11 Ս-15.08.2011թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ.26-08-62, ֆաքս 26-11-00, e-mail: info@arpa-sevan.am

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները

Տեղաբաշխված արժեթղթերի դասը	հասարակ անվանական բաժնետոմսեր
Արժեթղթերի քանակը	20452 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	2500 դրամ

*«Մենք ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են»:*

Ստորագրող անձինք՝

Պարույր Հակոբյան

Գլխավոր տնօրեն

Սեդա Փարսյան

գլխ. հաշվապահ

Զորիկ Վարդանյան

խորհրդի անդամ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԲԲԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը իր մեջ ներառում է ընկերության 2011թ. երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները և կառավարման մարմինների զեկույցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի վերաբերյալ, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա:

1. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

2011թ. երկրորդ եռամսյակում ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների և մատուցած ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 3 375 602 հազ.դր., որոնցից առավել կարևոր կառույցների աշխատանքների և մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են թիվ -1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Խ/Ի	Պատվիրատու կազմակերպության և կառույցի անվանումը	առանց ԱԱՀ-ի հազ.դր.
1	«Ոռոգման համակարգերի վերականգման հրատապ ծրագիր» Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ ՊՀ. Արմավիրի մայր ջրանցքի վերականգման աշխարանքներ	463 248
2.	«Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» ՊՀ.	
2.1.	«Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավման ու նորոգման շրջանակներում իրականացվող «Արփա-Սևան» թունելի առանձին հատվածների վերականգման և վերակառուցման աշխատանքներ -----	832 939
2.2.	«Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման ծառայությունների մատուցում -----	103 126
3	ՀՀ պաշտպանության նախարարություն Զորանոցի կառուցում	67 465
4.	«Հազարամյակի մարտահրավեր» Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ.	
4.1.	Չորս ինքնահոս համակարգերի կառուցում Այգեզարդում, Շենիկում, Մանթաշում և Վարդենիսում; -----	193 865
4.2.	Արզնի-Շամիրամի, Ստորին Հրազդանի, Արտաշատի և Շիրակի մայր ջրանցքների վերակառուցում -----	1 106 992
4.3.	Նոյեմբերյանի պոմպակայանի պատվարի վերակառուցում -----	424 664
5.	«ՄԵԾՆ ԷՐԻԿ» ՍՊԸ Մ. Դիլիջանի ցամքուրդայինք թունելի վերակառուցում	137 193
6.	Այլ աշխատանքներ և մատուցած ծառայություններ	46 110

## 2.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 2

հազ. դր

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Շեղումը բացարձակ արժեքով	Աճի տեմպը %
1	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	4 539 882	3 375 602	-1 164 280	74,4
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	-3 171 633	-2 648 842	522 791	83,5
Համախառն շահույթ (վնաս)	1 368 249	726 760	-641 489	53,1
Իրացման ծախսեր	500	25	-475	5,0
Վարչական ծախսեր	155 310	264 279	108 969	170,2
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	1 212 439	462 456	-749 983	38,1
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	30 151	26 339	-3 812	87,4
պաշարների վաճառքից		0	0	
վարձակալություն		0	0	
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	-61 088	-36 306	24 782	59,4
	0	0	0	
	0	0	0	
Գործառնական շահույթ (վնաս)	1 181 502	452 489	-729 013	38,3
Ֆինանսական ծախսեր	-55904	-76 681	-20 777	137,2
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	14 287	-93 603	-107 890	-655,2
արտարժույթի փոխարժեքային տարբերություն	0	0	0	
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	1 139 885	282 205	-857 680	24,8
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)		0	0	
Ջուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	1 139 885	282 205	-857 680	24,8
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	26 498	42 000	15 502	158,5
Ջուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1 113 387	240 205	-873 182	21,6
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	54 439	11 745	-42 694	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրազված շահույթ (վնաս)*	54 439	11 745	-42 694	

**3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

31.06.2011թ. դրությամբ ընկերության հիմնական միջոցների արժեքը կազմել է 3 813 613 հազ. դր., կուտակված մաշվածությունը՝ 900 249 հազ. դր., հաշվեկշռային արժեքը՝ 2 913 364 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմել է 23.6 տոկոս:

Ըստ առանձին դասերի հիմնական միջոցների արժեքի, կուտակված մաշվածության, հաշվեկշռային արժեքի և յուրաքանչյուր դասի հիմնական միջոցի մաշվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ- 3 ում:

Աղյուսակ 3  
հազ. դրամ

Դասի անվանումը	արժեքը	կուտակված մաշվածություն	հաշվեկշռ արժեքը	մաշվածքը %
Շենքեր և կառուցվածքներ	847 392	77 036	762 380	9.6
Մեքենա - սարքավորումներ	1 537 499	588 435	949 064	38.3
Տրանսպորտային միջոցներ	865 774	199 860	665 913	23.1
Արտադրական և տնտեսական գույք	29 215	12 631	16 583	43.2
Այլ հիմնական միջոցներ	42 311	12 850	29 462	30.4
Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմն. միջոցներ	3 322 191	898 789	2 423 402	27.1
Հողամասեր	483 449	-	483 449	-
Ընդամենը հիմնական միջոցներ, 31.06.2011թ.	3 813 613	900 249	2 913 364	23.6

31.03.2011թ. դրությամբ համապատասխան ցուցանիշները կազմել են՝

Ընդամենը հիմնական միջոցներ	3 812 574	784 660	3 027 914	20.6
Նախորդ տարվա համեմատ շեղումը	1039	115 589	-114 550	

Հաշվետու եռամսյակում նոր ձեռք բերված հիմնական միջոցների արժեքը կազմել է 65 650 հազ.դր., որից՝

- Մեքենա-սարքավորումների արժեքը կազմել է - 62 678 հազ.դր.;
- Այլ հիմնական միջոցների արժեքը կազմել է - 2 972 հազ. դր.:

**4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ֆինանսական վիճակի էական փոփոխության վերլուծությունը իրականացնելու համար ընկերության ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը ներկայացվում է աղյուսակ 5.1 և 5.2:

Աղյուսակ 5.1

Ակտիվ		Նախորդ ժամանակահատված		Հաշվետու ժամանակահատված		բացարձ. շեղումը հազ.դր	Աճի տեմպը %
		հազ.դր	%	հազ.դր	%		
1	Ընդամենը ունեցվածքը	5 300 521	100	5 460 169	100	159648	103
1,1	Ոչ ընթացիկ ակտիվներ	3 086 846	58.2	2 967 781	54.3	-119 065	96.1
1,2	Ընթացիկ ակտիվներ	2 213 675	41.8	2 492 388	45.6	278 713	112.6
1,2,1	Նյութեր	480 030	9.1	876 186	16	396 156	182.5
1,2,2	Դեբիտորական պարտքեր	1 585 559	29.9	1 426 242	26.1	-159 317	89.95
1,2,3	Դրամական միջոցներ	148 086	2.79	189 960	3.5	41 874	128.3

Աղյուսակ 5.2

Պասիվ		Նախորդ ժամանակահատված		Հաշվետու ժամանակահատված		բացարձ. շեղումը հազ.դր	Աճի տեմպը %
		հազ.դր	%	հազ.դր	%		
2	Ունեցվածքի աղբյուրները	5 300 521	100	5 460 169	100	159 648	103
2,1	Սեփական կապիտալ	3 659 064	69.0	3 577 688	65.5	-81 376	97.8
2,2	Պարտավորություններ	1 641 457	31.0	919 832	34.5	241024	114.7
2,2,1	Երկարաժամկետ	361 621	6.8	368 192	6.7	6 571	101.9
2,2,2	Կարճաժամկետ	87 399	1.7	226 265	4.2	138 866	258.9
2,2,3	Կրեդիտորական պարտքեր	1 191 987	22.5	1 047 000	23.6	96 037	108

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակներից նախորդ ժամանակահատվածի համեմատ հաշվետու եռամսյակում ընկերության ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշները էական փոփոխություններ չեն կրել:

1.Ընկերության ունեցվածքը աճել է 159 648 հազ.դր. և կազմել հաշվետու ժամանակաշրջանի վերջում 5 460 169 հազ.դր.:

Նշված փոփոխությունը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ակտիվների աճով, որոնց տեսակարար կշիռը ընկերության ունեցվածքում, նախորդ ժամանակահատվածի համեմատ աճել է 3.8 % և կազմել` 45.6 %: Ընթացիկ ակտիվների աճի բացարձակ արժեքը կազմել է 278 713 հազ.դր:

Ընթացիկ ակտիվների աճը հիմնականում տեղի է ունեցել`

- Նյութական պաշարների աճի հաշվին, որոնց աճի տեմպը կազմել է 182.5%, բացարձակ արժեքը` 268 444 հազ.դր.:
- Դրամական միջոցների և դրանց համարժեքների, որոնց աճի տեմպը կազմել է 128.3%, բացարձակ արժեքը` 41 874 հազ.դր.:

2. Նախորդ ժամանակահատվածի համեմատ, հաշվետու ժամանակաշրջանում սեփական կապիտալի տեսակարար կշիռը նվազել է 3.5%, որը հիմնականում պայմանավորված է կարճաժամկետ պարտավորությունների 138 866 հազ.դր. աճով:

«Արփա-Սևան» ԲԲԸ

Գլխավոր տնօրեն՝

Պ. Հակոբյան

Կատարող՝  
Ձ. Վարդանյան հեռ. 261190